«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք »

Առարկան՝ Ռուսաց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ Պետրոսյան Ռիտա

Ուսումնական հաստատություն՝ Արզականի միջնակարգ դպրոց

Երևան 2023

Ներածություն

Ընթերցանությունը որպես խոսքային գործունեության գրավոր տեսակ հաղորդակցման ամենակարևոր տեսակներից մեկն է։ Ընթերցանության մեջ ընդգծվում է նրա բովանդակությունը և իրականացման ընթացքը։ Բովանդակությունը գործունեության արդյունքն է, իսկ ընթացքը՝ նրա իրականացման տարրերի ամբողջությունը։

Ընթերցանության նպատակը տեքստում հաղորդվող ինֆորմացիայի ընկալումն ու իմաստավորումն է։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՏԵՔՍՏԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ընթերցանության ուսուցումը

Ընթերցանությունը օտար լեզվի ուսուցման կարևոր նպատակներից մեկն է: Ընթերցանության ուսուցման հիմնական խնդիրն անհրաժեշտ հմտությունների ձևավորման մակարդակն ապահովելն է: Այս նպատակի իրագործումը պարտադիր է, քանի որ միայն այդ դեպքում են ստեղծվում ռեալ ընթերցանության օբյեկտիվ նախադրյալներ:

Ընթերցանության ուղղությամբ տարվող գործնական աշխատանքը կոչված է ձևավորելու ու զարգացնելու հասուն ընթերցանության համար անհրաժեշտ հմտությունների նվազագույն մակարդակը, առանց որի աշակերտներն ուսումնառության տարիներին չեն տիրապետում հասուն ընթերցանությանը, ի վիճակի չեն լինում կարդալ ու հասկանալ օտար լեզվով և կորցնում են ձեռք բերված հմտություններն ու կարողությունները:

Ընթերցանության խնդիրներն ըստ հաղորդակցական մակարդակի բաժանվում են 2 խմբի՝

1. Ստանալ տեքստում ընդգրկված ինֆորմացիան
2. Ընկալման հետ մեկտեղ հաղորդել այն:

Ընթերցանությունն առաջին դեպքում ընթանում է լուռ, իսկ երկրորդ դեպքում՝ բարձրաձայն:

Շատ կարևոր է հիշել, որ տեքստը հասկանալուն պետք է հասնել միայն լուռ ընթերցանությամբ, հակառակ դեպքում սովորողների ուշադրությունը շեղվում է տեքստի բովանդակությունից։

Բարձրաձայն և լուռ ընթերցանության ուսուցման ձևերը տարբեր են։ Բարձրաձայն ընթերցանությունն ընթանում է տեքստի հնչյունավորված վերարտադրմամբ, տեքսի առավել փոքր հատվածներով ընկալմամբ, ավելի երկար դաղարների ընկալմամբ և այլն։

Ուսուսման պրոցեսում տեքստի կատարած ֆունկցիաները հետևյալն են՝

1. լեզվական նոր նյութի աղբյուր (կարդալ և դուրս գրել նոր բառերը)

2. նյութ՝ լեզվական երևույթները ընդգծելու համար

3. արտասանության ընդգծման միջոց (ուսուցիչն ուղղում է արտասանական սխալները)

4. բանավոր խոսքի համար նմուշ։

Ընթերցանության հիմնական ձևը բարձր դասարաններում պետք է լինի լուռ ընթերցանությունը։

Լեզվական նոր նյութը նախապես ակտիվացվում է բանավոր խոսքի մեջ։

Ուսուցիչը չպետք է սկզբից բարձրաձայն ընթերցի տեքստը, քանի որ աշակերտներն իրենք պետք է ծանոթանան նրա բովանդակությանը։

Նույնիսկ եթե տեքստի որոշ պարբերություններն օգտագործվում են որպես արտասանական վարժություններ, դրանք պետք է կատարել միայն լուռ

ընթերցանությունից հետո, այսինքն՝ երբ տեքստի բովանդակությունն արդեն հասկանալի է դարձել։

Ընթերցանության ուսուցման նպատակը աշակերտների ինքնուրույն ինֆորմացիա ստանալու կարողությունների ձևավորումն է լուռ ընթերցանության միջոցով։

Ընթերցանությունը գործնականի հետ մեկտեղ ունի նաև կրթական ու դաստիարակչական նշանակություն։

Ընթերցանությունն իմացական գործունեություն է։ Այն կապված է տեքստից որոշակի ինֆորմացիա ստանալու հետ։ Տեքստերի ճիշտ ընտրությունը հնարավորություն է ստեղծում իրականացնել ինչպես դաստիարակչական , այնպես էլ կրթական նպատակները։

Տեքստերի ընթերցումը զարգացնում է լեզվական դիտողականությունը և սովորողներին մղում տարբեր լեզուներում միևնույն մտքի բաղդատմանը։ Շատ կարևոր է նաև տեքստով ինքնուրույն աշխատանք կատարելու հմտությունները։

Ճիշտ կազմակերպած աշխատանքը նպաստում է սովորողների լեզվական և խոսքային կարողությունների զարգացմանը, բարձրացնում նրանց ընթերցանության ընդհանուր կուլտուրան։

Ընթերցանության տեխնիկա ասելով հասկացվում է հնարների այն ամբողջությունը, որն ապահովում է լեզվական ինֆորմացիայի ընկալումն ու համապատասխան վերամշակումը (տառերի, տառակապացությունների, քերականական հատկանիշների և այլն)։

Ընթերցանության տեխնիկա հասկացությունը պարունակում է՝

1. լեզվական նիշերի ընկալում և իմաստավորում (տառահնչյունային կապերի ստեղծում)

2. լեզվական նիշերի շղթան ընդգրկելու հմտություն (ընթերցանության դաշտ)

3. կարճ դադարներ կատարելու ունակություն։

Լուռ ընթերցանությունն ուսուցման նպատակն է, իսկ բարձրաձայնը՝ ուսուցման միջոց։

Կարևոր է նշել, որ իմաստային ինֆորմացիա ստանալու համար պետք է դիմել լուռ ընթերցանության, իսկ ընթերցանության տեխնիկան զարգացնելու համար՝ թե բարձրաձայն և թե լուռ։

Բարձրաձայն և լուռ ընթերցանության ձևերը կատարում են տարբեր ֆունկցիաներ։ Բարձրաձայն ընթերցանության խնդիրն է ինֆորմացիա հաղորդելը, իսկ լուռ ընթերցանությանը՝ ինֆորմացիայի ընդունելը։

Բարձրաձայն և լուռ ընթերցանության հնարքները տարբեր են։ Բարձրաձայն ընթերցելիս ի հայտ են գալիս տեքստի հնչյունավորված վերարտադրումը, տեքստը առավել փոքր հատվածներով ընկալելը, ավելի երկար դադարներ կատարելը և այլն։

Ընթերցանության նպատակը պայմանավորում է նրա ընթացքը։ Ըստ նպատակի ընթերցողը տեքստը ընկալում է մեծ կամ փոքր հատվածներով, տեսողական պատկերների ավել կամ պակաս հստակությամբ և ներքին խոսքի ընդլայնվածությամբ կամ սեղմությամբ։

Ընթերցողին անհրաժեշտ արդյունքին հանգեցնող գործողությունների ամբողջությունը կոչվում է ընթերցանության հնար։

Այսպիսով՝ ընթերցանության պրոցեսը անփոփոխ չէ։ Այն փոխվում է ըստ ընթերցանության նպատակի։

Ընթերցանությունը բնորոշվում է որպես ընկալողամտածական գործունեություն, որի ընթացքն ունի վերլուծահամադրական բնույթ և պայմանավորվում է ընթերցանության նպատակով։

Ընթերցանության սկզբնական փուլը տեքստի տեսողական ընկալումն է։

Հայտնի է, որ ընթերցանության պրոցեսում որպես ընկալման պայմանական իմաստային նվազագույն միավոր համարվում է բառը։

Բառի տեսողական ընկալումն ավարտվում է նրա ճանաչմամբ, այսինքն՝ նրա գրաֆիկական պատկերի և իմաստի համադրմամբ։

Ընթերցանության ուսուցման հիմնական սկզբունքներն են

1. **Ընթերցանությունը ուսուցվում է որպես խոսքային գործունեություն**

Ընթերցանությունը անհրաժեշտ է դիտել, որպես գործունեություն, որի ընթացքում սովորողները լուծում են հաղորդակցական տարբեր խնդիրներ։ Ուսումնական պրոցեսում տեքստի ընթերցումը միշտ պետք է հանդես գա որպես հաղորդակցման կոնկրետ դրսևորում, որն ուղղված է ոչ թե ընդհանրապես բովանդակությունը հասկանալուն, այլ ընթերցանական կարողությունները տվյալ աստիճանին համապատասխան մակարդակով զարգացնելու։

Հակառակ դեպքում այն կդիտվի որպես ուսուցման միջոց և կծառայի նոր լեզվական նյութն յուրացնելուն և բանավոր խոսքը զարգացնելուն։Բովանդակությունը հասկանալու պրոցեսը ղեկավարվում է առաջադրանքի օգնությամբ, որը տրվում է

սովորողներին տեքստի ընթերցումից առաջ, և կարդացածի բովանդակության հասկանալը ստուգելու ժամանակ:

2. **Ընթերցանության ուսուցումը պետք է դիտել որպես ճանաչողական խնդիրների լուծման պրոցես:**

Ընթերցանության առանձնահատկությունը որպես խոսքայի գործունեություն կայանաում է նրանում, որ նրա նպատակը ոչ միայն գործնական, այլ նաև ճանաչողական խնդիրների լուծումն է, որոնք թելադրվում են կրթական և դաստիարակչական նպատակներով:

Այս կապակցությամբ բացառիկ կարևոր նշանակություն է ստանում տեքստերի բովանդակությունը, որը կանխորոշում է վերաբերմունքն ընթերցանության նկատմամբ:

Ընթերցանության ճանաչողական խնդիրներն լուծելու համար անհրաժեշտ է լուծումները լինեն հետաքրքիր և որոշակի նշանակություն ունենան սովորողների համար: Սրա հետ մեկտեղ, ընթերցանության կազմակերպումը պետք է ուղեկցվի որոշակի խնդիրներով, որոնք ակտիվացնելով սովորողներին, հնարավորություն են տալիս իմաստավորել, խմբավորել և գնահատել տեքստում պարունակվող փաստերը: Հեշտ տեքստերի հետ մեկտեղ սովորողները պետք է կարդան նաև բովանդակության առումով որոշակի դժվարություն ներկայացնող տեքստեր:

3. **Ընթերցանության ուսուցումը օտար լեզվում հենվում է սովորողների մայրենի լեզվից ձեռք բերված ընթերցանության փորձի վրա:**

Հենց սկզբից ընթերցանության նկատմամբ սովորողների մեջ պետք է ձևավորել տեքստից իմաստային ինֆորմացիա ստանալու միտում:

Ելնելով ընթերցանության նպատակից, սովորողները մայրենի լեզվով տեքստը տարբեր ձևով /արագ, դանդաղ, ուշադիր/ են կարդում:Այս նույն կարողությունը պետք է զարգացնել նաև օտար լեզվում: Դրան կարելի է հասնել ոչ միայն մեթոդական հնարների, այլ նաև ընթերցանության համար նախատեսված նյութերի ընտրությամբ: Լեզվական առումով առավել հարմար են հեշտ տեքստերը, քանի որ դրանց ընթերցելու պայմանները մոտենում են մայրենի լեզվի պայմաններին, որը հնարավոր է դարձնում նույն հնարների օգտագործումը օտար լեզվում:

Այս խնդիրների լուծման համար բարենպաստ պայմաններ է ստեղծում ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու համար նախատեսված ընթերցանությունը, որին սովորողները պետք է տիրապետեն մյուս տեսակներից առաջ:

Մանրակրկիտ ընթերցանությունը հաջորդում է վերոհիշյալ ընթերցանությանը, քանի որ այն ավելի բարդ է ինֆորմացիա ստանալու տեսանկյունից:

4. Ընթերցանության ուսուցումը հենվում է յուրացվող լեզվական կառուցվածքների վրա:

Լեզվի կառուցվածքի և սպասարկու բառերի ֆունկցիան իմաստային հարաբերությունների ձևակերպումն ու հաղորդումն է:

Դրանց տիրապետումը ոչ միայն հեշտացնում և արագացնում է ընթերցանության պրոցեսը, այլ նաև նպաստում է տեքստի բովանդակությունը ճիշտ հասկանալուն:

Օտար լեզվի կառուցվածքները լավ իմանալը զգալիորեն հեշտացնում և ապահովում է ինքնաստուգումը, քանի որ այս դեպքում ընկալվող մտքի և նրա արտահայտման

լեզվական ձևի համեմատությունը հենվում է ոչ միայն ընթերցողի ունեցած լեզվական փորձի, այլ նաև իմաստային հարաբերությունների արտահայտման միջոցների վրա:

5. **Ընթերցանության ուսուցումը ներառում է սովորողների ոչ միայն ռեցեպտիվ այլև ռեպրոդուկտիվ գործունեությունը:**

Չնայած ընթերցանությունը խոսքային գործունեության ռեցեպտիվ տեսակն է, այնուամենայնիվ, նրա ընթացքը պահանջում է մի շարք ռեպրոդուկտիվ բնույթի գործողություններ,որոնք ավելի պարզ ի հայտ են գալիս ներքին խոսքում և հավանական կռահման մեջ, օրինակ՝ տեսողական զգայարանով ընկալելով նախադասության կամ պարբերության սկիզբը, սովորողը կռահում և արագ վերարտադրում է շարունակությունը:

Ընթերցանության նորմալ ընթացքը ենթադրում է հնարների ազատ կիրառում և գործողությունների արագ կատարում, որոնք հնարավոր են դառնում միայն համապատասխան հմտությունների ավտոմատացման դեպքում:

Ընթերցանության իրականացումը պահանջում է հնարների ավտոմատացում, որն առաջին հերթին վերաբերում է տեքստի ռեցեպտիվ մշակման հնարներին, որոնք կազմում են ընթերցանության տեխնիկայի հիմքը:

Որպես սրա արտաքին դրսևորում հանդես են գալիս ընթերցանության մեծ արագությունը և տարբեր արագությամբ կարդալու ընդունակությունը:

<u>Ընթերցանության տեսակները</u>

Ընթերցանության տեսակների գոյություն ունեցող ավանդություններում ընդգծվում է կամ **հասկանալու** պրոցեսի **բաղադրիչներից մեկի գերակշռումը** /վերլուծական-համադրական, թարգմանչական-ոչ թարգմանչական/ , կամ **լեզվական նյութի**

ուղղությամբ տարվող աշխատանքի բնույթը /ինտենսիվ-էքսենսիվ, պատրաստված-հանպատրաստից/։

Ընթերցանության պրոցեսի վրա ազդող բազմաթիվ գործոններից վճռական նշանակություն ունեն հետևյալները՝

ա) տեքստից ստացված ինֆորմացիայում կողմնորոշվելը.

բ) ստացած ինֆորմացիայի լիակատարության և ճշգրտության աստիճանի որոշելը.

Վերոհիշյալ չափանիշներին համապատասխան, առանձնացվում է ընթերցանության 3 տեսակ. թռուցիկ, ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու և մանրակրկիտ։

Թռուցիկ ընթերցանությանը ծանոթանալու ընթերցանության տեսակները հարաբերակցվում են համադրական ընթերցանությանը, իսկ մանրակրկիտը՝ վերլուծականին։

Թռուցիկ ընթերցանություն։ Թռուցիկ ընթերցանության նպատակը ամենաընդհանուր գծերով բովանդակության մասին պատկերացում կազմելն է։ Ստացած ինֆորմացիայի հիման վրա կարդացողը որոշում է, թե արդյոք իրեն պե՞տք է այդ հոդվածը կամ գիրքը։ Դրա անհրաժեշտությունը որոշելու համար բավական է կարդալ վերնագիրը կամ ենթավերնեգրերը, առանձին հոդվածները, նախադասությունները և այլն։ Ըստ էության տեղի է ունենում ընտրովի ընթերցանություն։

Ընթերցանության այս տեսակը ընթերցողից պահանջում է կատարելագործված հմտություններ և լեզվական որոշ նյութի տիրապետում։ Այդ պատճառով էլ սովորողներին ծանոթացնում են թռուցիկ ընթերցանության միայն առանձին հնարներին։

Ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ընթերցանություն:

Ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ժամանակ կարդացողի նպատակն է՝ ծանոթանալ գրքի, հատվածի, պատմվածքի կոնկրետ բովանդակությանը, պարզել ինչպես շոշափվող հարցերը, այնպես էլ դրանց լուծումը: Նման դեպքում ուշադրությունը կենտրոնացվում է գործողությունների զարգացմանը և հիմնական ինֆորմացիային:

Իր բնույթով սա <<անընդմեջ>> ընթերցանություն է, որն ընթանում է արագ տեմպով, քանի որ կարդացողը ձգտում է առավելագույն ամբողջականությամբ հասկանալ տեքստում ամփոփված ինֆորմացիան:

Ընթերցանության բոլոր տեսակներից ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ընթերցանությունը ամենասահունն է, այդ պատճառով այն օգտագործվում է սովորողների տեխնիկական հմտությունների ավտոմատացման աստիճանը որոշելու համար:

Մանրակրկիտ ընթերցանություն: Մանրակրկիտ ընթերցանությունը ենթադրում է տեքստի և լեզվական նյութի վերլուծություն: Ընթերցանության ընթացքում օգտագործվող լեզվական նյութի մտապահումն ապահովում է լեզվական դրական փորձի կուտակում, որի առկայությունը բանավոր խոսքի անսխալության անհրաժեշտ պայմանն է: Ընթերցանության ժամանակ տեքստի վերլուծվող միավորները տարբեր կոնտեքստներում ենթարկվում են բազմակի կրկնողության:

Սրանով էլ պայմանավորվում է սովորողների գիտակցության շրջանակներում համապատասխան միավորների իմաստային սահմանների և դրանց գործածության կանոնների ճշտորոշումը:

Այս ամենը հանգեցնում է նրան, որ ընթերցանությունը, երբ դանդաղ է ընթանում, ուղեկցվում է առանձին մասերի վերընթերցմամբ, դադարներով և ներքին խոսքում տեքստի վերարտադրությամբ։

Գոյություն ունի նաև ընթերցանության մեկ այլ տեսակ, այսպես կոչված, **փնտրողական ընթերցանությունը**, որի նպատակն է անծանոթ տեքստում գտնել կոնկրետ տեղեկություններ, փաստեր և այլն։

Ընթերցանության այս չորս տեսակների ուսուցանելն էլ միջնակարգ դպրոցի խնդիրն է, որովհետև այն հնարավորություն է տալիս դպրոցի շրջանավարտին կարդալ հանրամատչելի, հրապարակախոսական և, մասամբ, գեղարվեստական գրականություն։

Ընթերցանությունը որպես ուսուցման միջոց

Ընթերցանությունը հանդիսանում է ոչ միայն ուսուցման նպատակ, այլ նաև միջոց։ Ընթերցանության ընթացքում մտապահման արդյունավետությունն աճում է ի հաշիվ ուսումնական տեքստերի հատուկ ընտրության։

Ընթերցանության ընթացքում լեզվական նյութի մտապահումը կարող է լինել ոչ կամածին և կամածին։ Առաջինը տեղի ունի արագ ընթերցանության ժամանակ, երբ ընթերցողի ուշադրությունն ամբողջապես ուղղված է նյութի բովանդակության ընկալմանը։ Այդ դեպքում տեղի է ունենում բովանդակության և արտահայտման լեզվական ձևի մտապահում։ Ոչ կամածին ընթերցանության արդյունավետությունը առանձնապես զգալի է շատ ընթերցելու դեպքում։ Այդ պատճառով էլ ուսուցման բոլոր աստիճաններում էլ առաջարկվում է կարդալ մեծ քանակությամբ ոչ բարդ

տեքստեր։ Կամածին մտապահումը կատարվում է ոչ միայն տեքստերի բովանդակության, այլ նաև նրա արտահայտման լեզվական միջոցների վրա սովորողների ուշադրությունը գիտակցաբար ուղղելով։ Դրանց մտապահումը իրականացվում է սովորողների կամային ջանքերի միջոցով։

Բացի այդ, ընթերցանությունը նպաստում է բանավոր խոսքի զարգացմանը։

Կարդացվող տեքստերի բովոնդակությունը հիմք է ծառայում բանավոր խոսքի զարգացմանն ուղղված մի շարք վարժությունների համար, այսպես օրինակ՝ ընթերցածի վերաբերյալ հարց-պատասխան վարժություններ, վերապատմում, զրույցներ և քննարկումներ։

Որպես ուսուցման միջոց իր ուրույն տեղն ունի բարձրաձայն ընթերցանությունը։ Այն լայնորեն օգտագործվում է արտասանության ուսուցման համար և հանիսանում է նոր լեզվական միավորների հետ տարվող աշխատանքների անհրաժեշտ բաղադրիչ, քանի որ առանց բարձրաձայն ընթերցանության կիրառության անհնար է դառնում ճիշտ տեսողական–լսողական-շարժողական կերպարների ստեղծումը, որն անհրաժեշտ է լեզվական նյութի մտապահման և ընթերցանության զարգացման համար։

Բարձրաձայն ընթերցանությունը նպաստում է նաև խոսելու հմտությունների զարգացմանը։ Մասնավորապես այն հնարավորություն է ստեղծում զարգացնելու խոսքի արտահայտչականությունը։

Ընթերցանության ուսուցման մեթոդիկայում տարբերում են երկու կարգի կարողություններ՝ լեզվական նյութը հասկանալու և տեքտի բովանդակությունը

հասկանալու։ Այս կարողություններն իրենց բոլոր բաղադրիչներով հանդիսանում են վարժությունների մարզման օբյեկտներ։ Գոյություն ունեն վարժությունների հիմնական տիպեր, որոնք ուղղված են ընթերցանության հմտությունների և կարողությունների զարգացմանը։ Դրանցից են՝

- *Լեզվական ծանոթ նյութի օգտագործման հմտություններ զարգացնող վարժություններ*

Լեզվական նյութը ճանաչելը հնարավոր է դառնում ընթերցողի երկարատև հիշողության մեջ համապատասխան ձևանմուշի առկայության շնորհիվ։ Այդ պատճառով էլ բառապաշարի (ակտիվ և պասիվ) ուսուցման խնդիրներից մեկն այդ ձևանմուշի ստեղծումն է։ Այս խնդրի լուծմանը նպաստում են հետևյալ վարժությունները՝

1. բառերի խմբավորում

ա. ըստ իմաստային նմանության և հակադրության

բ. ըստ իմաստային հատկանիշների

գ. ըստ թեմայի

2. բառերի թարգմանություն

3. բառերի տարբերակում։

Լեզվական նյութի ճանաչման ավտոմատացման համար օգտագործվում են այսպես կոչված տեստ-վարժությունները։ Բառերի շարքից առաջարկվում է գրել նշված հատկանիշը ունեցող բառերը։ Օրինակ՝

- Յուրաքանչյուր շարքում գտնել այն բառը, որը հնչողությամբ համանուն է առաջինին։
- Յուրաքանչյուր շարքում գտնել անցյալ ժամանակով տրված բայը
- Յուրաքանչյուր շարքում գտնել այն բառը, որն իմաստով չի համընկնում մնացյալների հետ և այլն։

Լուռ ընթերցանության համար հանձնարարելի են հետևյալ տիպի առաջադրանքները՝

- Նախօրոք կարդացած տեքստում գտնել այն հատվածը, որտեղ խոսվում է …… մասին
- Տեքսում գտնել այն փաստերը, որոնք հերքում են ……., և այլն։

Պահանջված ինֆորմացիայի որոնման նպատակով տեքստի որևէ մասի ընթերցումը արագացնում է լուռ ընթերցանության պրոցեսը։

Ընթերցանության արագացմանը նպաստում է նաև ամբողջ տեքստի ընթերցումը՝ նախատեքստային խնդիրների լուծման և տեքստը իմաստային մասերի բաժանելու նպատակով։

Ընթերցանության զարագացմանն է նպաստում նաև տեքստի առաջին ընթերցանության վրա ծախսվող ժամանակի սահմանումը։ Ուսուցիչը հանձնարարում է տեքստի ընթերցանությունը՝ հետևելով, որ այն ավարտվի որոշված ժամանակի սահմաններում։

Բառերի, նախադասությունների և տեքստային հատվածների միջև իմաստային հարաբերությունների հաստատման համար օգտագործվում է քերականական վերլուծությունը, որի նպատակը տարբեր ձևերն ըստ արտաքին հատկանիշների ճանաչելը և նախադասության մեջ նրանց ֆունկցիան հասկանալու հմտություններ ձևավորելն է։

Նախադասության բաղադրիչների գիտակցման պրոցեսի կատարելագործմանն են ուղղված հետևյալ վարժությունները.

- Նախադասություններում ընդգծել բառակապակցությունները
- Կազմել նախադասություններ տրված բառակապակցություններով
- Կազմել նախադասություններ՝ գործածելով տրված բառը և այլն։

Վերոհիշյալ վարժությունների նպատակն է նաև նախադասություններում և տեքստում տարբերել գլխավորն ու երկրորդականը։

- *Լեզվական անծանոթ նյութի օգտագործման հմտությունը զարգացնող վարժություններ*

Օտար լեզվով ընթերցելիս սովորողները հանդիպում են անծանոթ բառերի։ Այդ իսկ պատճառով պետք է նրանց սովորեցնել բացահայտել անծանոթ բառի իմաստը։ Սովորողը լեզվական փորձի և բառարանի միջոցով պետք է տիրապետի անծանոթ բառերի իմաստի բացահայտման հիմնական եղանակներին։

Լեզվական փորձ ասելով նկատի ունենք կռահելու կարողությունը, որն իրականցվում է

ա. բառի բաղադրիչների ճանաչման հիման վրա

բ. մայրենի, ռուսաց և օտար լեզուներում բառերի ընդհանրության հիման վրա

գ. կոնտեքստի հիման վրա։

Երկլեզվյան բառարանից օգտվելու հմտությունների ձևավորումը պահանջում է հետևյալ վարժությունների կատարումը.

ա. Այբբենական հերթականությամբ մի շարք բառերի արագ դասավորում

բ. Բառի ուղիղ ձևի ճանաչում

գ. Բառի խոսքի մասի պատկանելիության որոշում

դ. Կոնտեքստի և բառի նշանակության համադրում

Միաժամանակ հարկավոր է վարժությունների միջոցով զարգացնել աշակերտների կռահելու կարողությունները։ Այդպիսի վարժություններից են՝

1. Գտնել տվյալ նախադասություններից հարցին համապատասխանողը
2. Գտնել այն գոյականը, որը գործածվում է տվյալ բայերի հետ
3. Կռահել տրված բառի իմաստը
    1. ելնելով ծանոթ փաստերից
    2. տրամաբանական դատողությունից
    3. բառակազմական վերլուծությունից
    4. լրացնել բաց թողված բառերը

4.Գտնել տվյալ նախադասությունների շարունակությունը

5. Կարդալ առաջին պարբերությունը և կռահել տեքստի շարունակությունը

6. Կարդալ տեքստի վերնագիրը և որոշել, թե ինչի մասին է այն:

Տեքստի բովանդակությունը հասկանալու կարողությունները զարգացնող վարժությունները ընթերցողից պահանջում են հետևյալ հմտությունները՝

- տեքստի առանձին բաղադրիչների և առավել էական փաստերի առանձնացում.
- Փաստերի համադրում և ընդհանրացում.
- Գլխավորի և երկրորդականի տարբերում.
- Ինֆորմացիայի գնահատում.
- Պարբերության կամ տեքստի հիմնական թեմայի որոշում.
- Փաստերի և մտքերի տրամաբանական մշակում և միավորում:

Ընթերցանության նյութի հիման վրա կազմված վարժությունների օրինակներ են՝

1. Որոշել պարբերության հիմնական միտքը.
2. Ապացուցել նշված մտքի ճիշտ կամ սխալ լինելը.
3. Գտնել անավարտ պարբերության շարունակությունը, վերնագրել այն.
4. Գտնել հիմնական միտքը, գնահատել այն և ցույց տալ սեփական վերաբերմունքը նրա նկատմամբ.
5. Գտնել այն նախադասությունները, որոնք պարունակում են կարևոր տվյալներ /փաստեր, կարևոր մտքեր/ կամ առաջադրված հարցի պատասխանը.
6. Տեքստը բաժանել իմաստային մասերի.
7. Վերնագրել յուրաքանչյուր պարբերությունը.
8. Փոխել տեքստի սկիզբը կամ վերջը.
9. Շարունակել տեքստը՝ պահպանելով տրամաբանական կապը և այլն:

Ընթերցանության տեմպը զարգացնող վարժություններ

1. Տեքստի ընթերցելը:
    - Ուսուցիչը սահմանում է որոշակի ժամանակ՝ տեքստը լուռ ընթերցելու համար.
    - Աշակերտները լուռ կարդում են տեքստը, ուսուցիչը հետևում է ժամանակին:
2. Գտնել և բարձրաձայն կարդալ այն նախադասությունը, որը սկսվում է.….բառով, որին նախորդում է…..նախադասությունը:
3. Գտնել և բարձրաձայն կարդալ այն նախադասությունը, որի մեջ խոսվում է……մասին:
4. Ուսուցիչը հիշեցնում է տեքստից մի փաստ, իսկ աշակերտները ասում են, թե ինչ պատահեց տվյալ իրադրությունից առաջ և հետո:

Մանրակրկիտ ընթերցանության ուսուցման նպատակով օգտագործվում են ոչ մեծ տեքստեր կամ տեքստի որոշ հատվածներ, որոնք իրենց բովանդակությամբ հետաքրքրություն են ներկայացնում և պարունակում են լեզվական որոշակի դժվարություններ:

Աշխատանքը սկսվում է ամբողջ տեքստին թռուցիկ կերպով ծանոթանալով, ինչպես նաև վերնագիրը, առաջին և վերջին նախադասությունները կարդալով: Այս ընթերցանության նպատակն է պարզել թե ինչի մասին է տեքստը և ինչպիսին է շարադրության ձևը:

Ապա հետևում է ամբողջ տեքստի ինքնուրույն, ուշադիր ընթերցանությունը: Ընթերցանության այս տեսակի դեպքում , որպես հասկանալը ստուգելու եղանակ, թույլ է տրվում թարգմանել տեքստի դժվար մասերը:

Նախադասության այն մասերը , որոնք դվարություն են ներկայացնում կամ սովորողի կողմից ճիշտ չեն ընկալվում, ենթարկվում են լեքսիկական, քերականական կամ լեքսիկական-քերականական վերլուծության:

Վերլուծության ենթարկվող նախադասությունները պետք է բարձրաձայն կարդալ, քանի որ դա նպաստում է ավելի լավ հասկանալուն:

Տեքստը հասկանալու ճշգրտությունը կարելի է ստուգել հարցերի և տեստերի միջոցով:Ստուգումն ավարտվում է թեմայի պարզաբանումով և տեքստում շարադրված փաստերի գնահատումով: Վերջում սովորողները մեկ անգամ ևս կարդում են տեքստը համոզվելու համար, թե արդյոք ամեն ինչ և բոլոր էական պահերն են հասկանալի:

Թռուցիկ ընթերցանության ուսուցում

Թռուցիկ ընթերցանության զարգացման համար օգտագործվում են մանրակրկիտ և ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ընթերցանության ժամանակ օգտագործվող հնարներից մի քանիսը: Այսպես օրինակ՝

- Որոշել ինչի մասին է տեքստը:
- Լրագրում /գրքում, պատմվածքում/ գտնել….մասին:
- Որոշել ամսագրի /գրքի/ հոդվածների թեմատիկան:

Այս առաջադրանքները սովորողները կատարում են նախօրոք կարդացված նյութի հիման վրա: Նպատակահարմար են այն տեքստերը, որոնց վերնագրերը չեն հուշում բովանդակությունը:

Փնտրողական ընթերցանության ուսուցում

Այս ընթերցանությունն ուղղված է թեման կամ բովանդակությունը հայտնի տեքստում կոնկրետ ինֆորմացիա գտնելուն: Այդ պատճառով էլ առաջադրանքը պետք է ճշգրիտ արտացոլի լուծման ենթակա խնդիրները. Օրինակ՝

- Տեքստում գտնել այն հատվածը ,որտեղ նկարագրվում է ….. կամ խոսվում է…… մասին:
- Տեքստում տվյալներ են բերվում……. մասին:

Նման առաջադրանքներ տրվում են նախ ընթերցված, ապա անծանոթ տեքստերի վերաբերյալ:

Առաջադրանքները կարելի է խմբավորել ըստ գործողությունների.

1.Փաստերի առանձնացում.

- Նկարների համեմատում տեքստի բովանդակության հետ /ասել թե որ նկարն է համապատասխանում տեքստի բովանդակությանը, թե ինչն է պակասում նկարի մեջ, ինչն է ավելորդ և այլն/:
- Լուծել խաչբառը:
- Կատարել ցուցումը /պլան գրել և այլն/:
- Լուծել խնդիրը /հանելուկը/
- Տրված պատասխանների մեջ ընտրել հարցաթերթիկների պատասխանները:

2.Փաստերի կազմակերպում.

- Կրճատել տեքստը , հանելով այնտեղից ոչ էականը.
- Համարակալել պարբերությունները ճիշտ հաջորդականությամբ.
- Դասավորել նկարներն ըստ տեքստի իրադարձությունների.

3.*Մեկնաբանում շարույթում*

- Գտնել սխալը տրամաբանական շարույթում.
- Կռահել պատմվածքի շարունակությունը.
- Հակադրել պատմվածքի թարգմանությունը մայրենի լեզվով բնօրինակի հետ և գտնել թարգմանության իմաստային սխալները:

4.*Գնահատում.*

5.Համեմատել մի քանի տեքստեր և ցույց տալ նրանցում առկա ընդհանուր գաղափարը.

6.Տրված տարբերակներից տեքստի համար ընտրել վերնագիր.

Առաջադրանքների մի խումբ պահանջում է ընթերցողից մանրամասնությամբ հասկանալ տեքստը, իսկ մյուս խումբը զարգացնում է ընդհանուր բովանդակությանը ծանոթանալու ընթերցանության հնարները, քանի որ այդ առաջադրանքները կապված են տեքստի ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար:

Եզրակացություն

Ինչպես հայտնի է, խոսքային գործունեությունը մարդու կողմից լեզուների օգտագործման գործնթացն է հաղորդակցվելու նպատակով, որն ընթանում է մարդկանց միջև իրենց մտքերի անմիջական փոխանակման արդյունքում, կամ նյութի ընթերցանության միջոցով:Ընթերցանությունը, որպես խոսքային գործունեության տեսակ, թույլ է տալիս ընթերցողին գտնվել ուսումնասիրվող օտար լեզվի մթնոլորտում :Այսպիսով՝ ընթերցանությունը, որպես խոսքային գործունեության տեսակ, ունի իր յուրահատուկ հաղորդակցական խնդիրը. այն տեղեկատվություն ստանալու աղբյուր է: Ինչպես արդեն նշվեց, այն ենթադրում է մի շարք հիմնական կարողություններ. **ընդհանուր բովանդակության ընկալում, տեղեկատվության որոնում, բովանդակության ամբողջական և մանրամասն ընկալում**: Դպրոցում օտար լեզուների ուսուցման խնդիրն է **լուռ ընթերցելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը**: **Բարձրաձայն ընթերցանությունը հանդես է գալիս որպես անցումային փուլ դեպի լուռ ընթերցանություն**:

Գրականություն՝

1.Մ. Գ. Աստվածատրյան- Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա

2.Фоломкина С. К.-Методика обучения чтению

3.Вавилова М.Г.- Задание как мотив-стимул при обучении чтению

на иностранном языке

4. Ляховицкий М.В.-Методика преподавания иностранных языков. М.:«Высшая школа»